Հայտարարություն

ՀՀ Շիրակի մարզի Գյումրու << Գյումրու թիվ 7 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր տեղերի համար.

1. Դասվարի (15 դասաժամ) թափուր տեղ
2. << Տեխնոլոգիա >> առարկայի ուսուցչի թափուր տեղ (20 դասաժամ)
3. << Ֆիզիկա >> առարկայի ուսուցչի թափուր տեղ (16 դասաժամ)
4. Ռուսերենով ուսուցմամբ <<Ֆիզիկա>> առարկայի ուսուցչի թափուր տեղ (6 դասաժամ)
5. << Ֆիզկուլտուրա >> առարկայի ուսուցչի թափուր տեղ (15 դասաժամ)

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար (3 x 4) չափի
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
3. անձը հաստատող փաստաթուղթ
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)
5. ինքնակենսագրություն (Ձև 5)
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև սեպտեմբերի 20-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթները տեղի կունենան ՀՀ Շիրակի մարզի Գյումրու թիվ 7 հիմնական դպրոցում, հասցե՝ ք. Գյումրի, Ալեք Մանուկյան 4, ըստ հետևյալ ժամանակացույցի.

1. 22.09.2022թ. ժամը 11:00-ին <<Ֆիզիկա>>
2. 22.09.2022թ. ժամը 11:00-ին ռուսերենով ուսուցմամբ <<Ֆիզիկա>>
3. 22.09.2022թ. ժամը ժամը 13:00-ին << Ֆիզկուլտուրա >>
4. 22.09.2022թ. ժամը 16:00-ին << Տեխնոլոգիա >>
5. 23.09.2022թ.ժամը 15:00-ին՝ դասվարի թափուր տեղի համար

Տեղեկությունների համար զանգահարել /0312-5-06-68/ հեռախոսահամարով: